Հավելված 14

Աղյուսակ 14. 52

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԼԱՆԸ

ՄԱՍ Ա: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Գերատեսչության հիմնական վերջնական արդյունքները (որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել և նրանց իրագործման ռազմավարությունները)

Սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական խնդիրներն ուղղակիորեն առնչվում և համընկնում են ՀՀ կառավարության ծրագրի, ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրի, ինչպես նաև Կայուն զարգացման ծրագրի գերակայություններին:

2009 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ռազմավարական նպատակներն են սոցիալապես խոցելի խմբերի առավել արդյունավետ պաշտպանության և սոցիալական աջակցության մատչելիության ապահովումը, հատկապես՝

- հաշմանդամների, տարեցների, կանանց ու երեխաների սոցիալական պաշտպանության
- բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման, արժանապատիվ աշխատանքի, դրա դիմաց համարժեք վարձատրության, աշխատանքով պայմանավորված եկամուտների ավելացման, սոցիալական իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծման,
- սոցիալական աջակցության հասցեականության մեծացման ու նպաստների շարունակական աճի ապահովման խնդիրները:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում առաջնահերթ խնդիր է մնում կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումը՝ ՀՀ կառավարության ծրագրի և Կայուն զարգացման ծրագրի համաձայն: Համապատասխան քայլեր կձեռնարկվեն նաև պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգի և մասնավորապես անձնավորված հաշվառման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Կշարունակվեն սոցիալական քարտերի համակարգի ամբողջական ներդրման աշխատանքները:

Արդյունքում՝

- կկատարելագործվեն սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաները, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել տեղեկատվության ինքնաշխատ փոխանակություն,
- քայլեր կձեռնարկվեն էլեկտրոնային տեղեկատվությունը պաշտոնական համարելու և դրա հիման վրա շահառուներին սպասարկելու կառուցակարգեր սահմանելու ուղղությամբ,

Զբաղվածության բնագավառում իրականացվող աշխատանքներն ուղղված կլինեն բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովմանն ու աշխատաշուկայում լարվածության թուլացմանը:

2009 թվականի զբաղվածության կարգավորման պետական ծրագրով նախատեսվող և ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող միջոցառումների իրականացումը նպատակաուղղված կլինի ապահովելու՝

- զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններում խորհրդատվություն ստացող անձանց թվաքանակի առնվազն 25% աճ,
- հաշվառվող անձանց թվաքանակի առնվազն 10% աճ,
- զբաղվածության ակտիվ ծրագրերում չզբաղվածների ընդգրկվածության ցուցանիշի աճ՝ առնվազն 10%-ով,
- մասնագիտական ուսուցման դասընթացներն ավարտածների մինչև 60%-ի աշխատանքի տեղավորում (6-9 ամսվա ընթացքում),
- աշխատանքի տեղավորվածների թվի առնվազն 5 % աճ,
- հաշվառված անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորում՝ առնվազն 2%,
- երիտասարդների աշխատանքի տեղավորման ցուցանիշի առնվազն 5% աճ,
- զբաղվածության մարզային և տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թվի առնվազն 15 % աճ,
- հանրության իրազեկման մակարդակի բարձրացում:

Արդյունքում՝

- Կմշակվի բնակչության զբաղվածության ռազմավարությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը, ինչպես նաև բնագավառի ներքին առանձնահատկությունները,
- կշարունակվեն «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի» կայացման աշխատանքները, որի գործունեությունը նպատակաուղղված կլինի աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանը և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան՝ մասնագիտական կողմնորոշման իրականացմանը, մասնագիտությունների ընտրության վերաբերյալ խորհրդատվության տրամադրմանը, կարողությունների, ունակությունների և հակումների բացահայտմանը:
- կներդրվի «Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագիրը Գյումրի քաղաքում հաշմանդամ գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման և աշխատանքային վերականգնման կենտրոնի միջոցով, որով նախատեսվում է խորհրդատվություն տրամադրել 1500 շահառուներին

Սոցիալական աջակցության բնագավառում 2009 թվականին հրատապ է լինելու բնակչության սոցիալական աջակցության, մասնավորապես ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության բարձրացման հարցը:

Արդյունքում՝

- Կշարունակվի այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող և հատկապես բազմազավակ ընտանիքներին,
- Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվելու է ելնելով ընտանիքում երեխայի ծնվելու հերթականությունից,
- բարձրացվելու է երեխայի խնամքի նպաստի չափը, քանի որ այն անհամեմատ ցածր է երեխայի խնամքի համար անհրաժեշտ գումարից: Ուստի այն կավելացվի՝ հավասարեցվելով տվյալ տարվա համար սահմանված նվազագույն աշխատավարձի 60% - ին:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում կշարունակվի առանց ծնողական խնամքի մնացած 935 երեխաների շուրջօրյա խնամքը 8 մանկատներում, ապահովելով նրանց դաստիարակության, ուսման, մտավոր և ֆիզիկական զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Արդյունքում՝

- շարունակվելու է մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին տրամադրվող պետական աջակցությունը, որի շրջանակներում իրականացվում է շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը և ուսուցումը, սոցիալական պաշտպանությունը, բնակարանների և անհրաժեշտ գույքի գնումը և հասարակությունում նրանց ինտեգրումը:
- կիրականացվեն երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ, կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ Ազգային ծրագրերով, ինչպես նաև դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թթ ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները:
- Լոռու մարզում կշարունակվի մանկատների բեռնաթափման և սոցիալական որբության կրճատման ծրագիրը, որի նպատակն է ապահովել երեխաների վերադարձը հարազատ միջավայր և վերականգնել նրանց կապերն իրենց ընտանիքների ու համայնքների հետ:
- կշարունակվի նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության 7 երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատությունների գործունեությունը,
- Պետական աջակցություն կտրամադրվի «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությանը՝ երեխաների խնամքի իր չորս ցերեկային կենտրոնների կողմից երեխաների զարգացմանն ու ընտանիքների հզորացմանն ուղղված ծառայությունների մատուցման համար:
- կշարունակվի խնամատար ընտանիքի ինստիտուտի գործունեությունը, որի շրջանակներում նախատեսվում է խնամատար ընտանիքներում տեղավորել 25 երեխա:

- 2009 թվականին կիրականացվի «Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագիրը, որով նախատեսվում է ապահովել թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունը և նրանց մատչելի, բազմակողմանի և օպերատիվ աջակցության կազմակերպումը:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությունում նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքները:

Արդյունքում՝

- Կշարունակվի հաշմանդամների պրոթեզավորման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման գործընթացը: Նախատեսվում է իրականացնել նաև հաշմանդամների աչքի պրոթեզավորման և ձայնալարերը հեռացրած հաշմանդամներին ձայնաստեղծ սարքերով ապահովելու ծրագրեր: Ձեռք կբերվեն հատուկ տառատեսակներով գրքեր և տետրեր, կձայնագրվեն «Խոսող գրքեր»:
- Կշարունակվեն հաշմանդամների բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքները: Կիրականացվի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում Վարդենիսի տուն-ինտերնատին կից ցերեկային կենտրոնում:
- Կիրականացվեն տեսողությունից հաշմանդամ անձանց հատուկ համակարգչային տեխնիկայով ապահովելու և «Փրկություն» հասարակական կազմակերպության կողմից հաշմանդամ երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնին աջակցություն
- կիրականացվեն միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման աշխատանքները, մասնավորապես պետության լրիվ խնամքի ներքո գտնվող 1010 միայնակ ծերեր ու հաշմանդամներ կխնամվեն 4 տուն-ինտերնատներում, իսկ Երևան քաղաքում տնային պայմաններում կսպասարկվի 1500 միայնակ տարեց ու հաշմանդամ քաղաքացի:
- Զգալիորեն կբարձրացվեն Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, ինչպես նաև զինհաշմանդամներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին որոշ արտոնությունների դիմաց տրամադրվող դրամական օգնությունների չափերը:
- Կշարունակվեն աշխատանքներն անօթևան մարդկանց Ժամանակավոր կացարանով ապահովման ուղղությամբ: Ժամանակավոր կացարանի տեղերը կավելացվեն 10-ով:

2. 2009 թվականի գերատեսչության կողմից մատուցվելիք ծառայություններում կատարվող խոշոր փոփոխությունները

Տարեցներին և հաշմանդամներին մատուցվող ծառայություններ

Վերջին տարիներին տարեցների հիմնահարցերը գտնվում են կառավարության ուշադրության շրջանակներում: Պետության կողմից այս բնագավառում վարվող քաղաքականությունը արդյունավետ իրականացնելու նպատակով որոշ քայլեր են նախատեսվել տարեցների կյանքի պայմանների բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝

- ***շուրջօրյա խնամքի տուն-ինտերնատներում մեկ խնամվողի համար 1 օրվա ծախսը*** ավելացել է 17.9%-ով,
- ***միայնակ տարեցների տնային պայմաններում խնամքի*** համար կատարվող ծախսերի 13,8%-ով աճը նախատեսվում է միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրման աշխարհագրությունը, տնային պայմաններում ծառայությունների մատուցումը ընդլայնել նաև հանրապետության մարզերում բնակվող միայնակ ծերերին տնային պայմաններում սպասարկելու համար հասարակական կազմակերպություններին պետական աջակցության տրամադրման միջոցով,
- ***անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով*** նախատեսվում է ավելացնել անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանի տեղերը 10 մարդու համար (2008թ.՝ 50 մարդ), արդյունքում ֆինանսավորման ծավալը կավելանա 31.9%- ով,
- ***Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում*** 2009թ. ֆինանսական միջոցների 14.2%-ով ավելացումը նախատեսվում է հիմնականում ուղղել նոր ծառայությունների մատուցմանը և ավելի որակյալ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրմանը: Վերջին տարիներին հաշմանդամները պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով հիմնականում ապահովվում են անմիջապես, առանց հերթերի, սակայն դեռևս խնդիր է վերականգնողական պարագաների որակի բարելավման և տեսականու ավելացման հարցը:

Ընտանիքին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ձեռնարկվում են որոշակի միջոցառումներ երկրում ձևավորելու ի շահ երեխաների պետական քաղաքականության սկզբունքներ՝ սոցիալական պետության սկզբունքներին համապատասխան: Նախատեսվող Ֆինանսավորման ծավալի ավելի քան կրկնակի ավելացումը պայմանավորված է երեխաներին մատուցվող նոր ծառայությունների տրամադրման, ինչպես նաև գործող ծառայությունների ընդլայնման հաբգամանքով: Այս բնագավառում վարվող քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի երեխաների խնամքի և պաշտպանության մեկ համակարգի ստեղծմանը, երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցմանը և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելմանը, ինչպես նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բարելավմանը:

Պետական նպաստների տրամադրում բնակչությանը

Ոլորտը կանոնակարգվում է «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև օրենքների կիրառությունն ապահովող ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: Համաձայն այդ օրենքների պետական նպաստների՝ ընտանեկան նպաստ, երեխայի խնամքի նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, ինչպես նաև Հայաստանի զոհված ազգային յհերոսների և Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին տրամադրվող նպաստի նշանակման և վճարման գործընթացն իրականացնում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները:

- ***Ընտանեկան նպաստը*** նշանակվում է աղքատ ընտանիքներին նրանց կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելու նպատակով: Նպաստառու ընտանիքների թվաքանակը որոշվել է ելնելով հանրապետությունում աղքատության կրճատման ընթացքից, եվրոպական ստանդարտներից, իսկ այդ նպատակի համար միջոցների ծավալները նախատեսվել են կանխատեսվող ՀՆԱ-ից 0,8 %-ի սահմաններում:
- ***Երեխայի ծննդյան միանվագ նպաստը*** տրվում է ընտանիքի կատարած լրացուցիչ ծախսերի մասնակի հատուցման համար, ինչպես նաև ծրագիրը հետապնդում է ժողովրդագրական ցուցանիշների բարելավման նպատակ: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունները (բարելավումը), ինչպես նաև ընտանիքի կողմից ծննդյան կապակցությամբ արվող լրացուցիչ ծախսերը (մեծացումը) նախատեսվում է ծննդյան նպաստի չափը բարձրացնել սահմանելով համապատասխանաբար՝ 50 հազար և տարբերակել ըստ ընտանիքում երեխայի հերթականության՝ 3-րդ և ավելի երեխա ունենալու դեպքում՝ 430.0 հազ. դրամ:
- ***Երեխայի խնամքի նպաստը*** նշանակվում է մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողին նրա չստացած աշխատավարձի մասնակի հատուցման նպատակով: Հաշվի առնելով, որ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով երեխայի խնամքի նպաստի նպատակը խնամող անձի աշխատավարձի մասնակի հատուցումն է, նախատեսվում է նպաստի չափը պայմանավորել նվազագույն աշխատավարձի մեծությամբ՝ տվյալ տարվա համար սահմանված նվազագույն աշխատավարձի 60%-ի չափով:
- «Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին նպաստ» ծրագրով նախատեսվում է զոհված ազգային հերոսի նպաստառու 9 ընտանիքների նպաստի ամսական չափի բարձրացում, այն 2009 թվականին կկազմի 250 հազ. դրամ և որպես նոր բաղադրիչ՝ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված՝ զոհված անձի ընտանիքներին նպաստ սահմանելով՝ առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված 35 անձանց ընտանիքների համար նպաստի չափը՝ 150.0 հազ. դրամ, երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված 54 անձանց ընտանիքների համար նպաստի չափը՝ 100.0 հազ. դրամ:

Խոշոր փոփոխություններ գերատեսչության ներսում ծառայությունների մատուցման ձևում

Տարեցներին մատուցվող ծառայություններ և ընտանիքին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ

Այս բնագավառում կադրային հիմնական փոփոխությունները նախատեսվում է ՀՀ ԱՍՀ նախարարության ենթակայությանը հանձնված տուն-ինտերնատներում, որտեղ սպասարկող անձնակազմի թվաքանակը ավելանում է պայմանավորված ՀՀ կառավարության 01.02.2007 թ. N 201-Ն որոշմամբ, որով սահմանվում են աշխատանքի առանձնահատուկ բնույթ ունեցող աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկություններ:

Զբաղվածության ծառայություններ

Այս բնագավառում հիմնական փոփոխությունները տեղի կունենան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունների զարգացման առումով, որի համար նախատեսված է ավելացնել այս ծառայությանը հատկացվող ֆինանսավորման ծավալը և հաշմանդամների մասնագիտական վերապատրաստման և աշխատանքային վերականգնման ծառայություններ մատուցող կենտրոնի ստեղծման առումով: Կադրերի առումով Կենտրոնին անհրաժեշտ կլինի 9 հաստիքներ իր լիազորությունների իրականացման համար:

Գերատեսչության 2009 թվականի նախատեսված հիմնական կապիտալ միջոցառումները

ՀՀ 2009 թվականին նախատեսվում են «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի համար մասնաշենքերի կառուցում և «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վետերան օթևան» կացարանի հիմնանորոգում՝ ինչը հնարավորություն կընձեռնի համապատասխան ծառայությունները ավելի արդյունավետ և մեծ ծավալով իրականացմանը:

2009 թվականին նախատեսվող ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում և ենթակա ՊՈԱԿ-ներում նախատեսվում են իրականացնել նաև աշխատատեղերի վերազինմանը, ժամանակակից տեխնոլոգիական և կենցաղային էլեկտրոնային սարքավորումներով հագեցմանը, շենքերի վերանորոգմանն ու դրանց անվտանգության ապահովմանը ուղղված կապիտալ ծախսեր: